ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 61/1445 «29» 12 2016թ.

«ԼԵՌՆԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Լ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ
ք. Երևան, Նորք-Մարաշ, 9-րդ փող. 129 տուն

Հարգելի պարոն Թադևոսյան

Երևանի քաղաքապետարանի և «Լեռնիկ Թադևոսյան» ՍՊԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) միջև 03.11.2015 թվականին կնքված «ԵՔ-ԲԸԱՀ-ԾՁԲ-16/16» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կատարողը ստանձնում է Նոր Նորք վարչական շրջանի կաթսայատան ծխատարների և օդատարների ստուգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագրին, գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով»:

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարին 14.11.2016 թվականին հասցեագրված գրությամբ նշել եք, որ Ընկերության կողմից վերը նշված Պայմանագրով մատուցել եք 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով ծառայություն, սակայն հրաժարվում եք ֆինանսավորումից, ինչպես նաև չեք ներկայացնում. ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Պայմանագրի 3.1 համաձայն՝ Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

Ի պատասխան Ձեր վերը նշված գրության, Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարը 19.12.2016 թվականի հ 48/117 գրությամբ առաջարկել է երկօրյա ժամկետում ապահովել Պայմանագրի 3.1 կետով սահմանված փաստաթղթերը, սակայն Ընկերության կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ)

օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը փաստացի հրաժարվել է կատարել Պայմանագրով նախատեսված պարտավորությունները, այն է՝ չի ստորագրում Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող երկկողմ հաստատված փաստաթուղթը, ուստի Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված ծառայությունների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Գ. ՉԹՐՅԱՆ**

Կատարող՝ Բ. Արամյան
011 514-374